

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Հիմա սիրով, ալ ներէ՛ մարդերուն - սիրտ իմ - բոլոր.
Կեցած մինակ քարափին թող որ երթայ աչքը խոր.
Այդ քարափէն անխըտիր անցորդն եղաւ ցաւաբեր
Երբ դուն մանուկ մը իբրեւ առիւր անվախ, տըւիր սէր:

Ներէ՛ հո՛գիս, դուն հիմա, ներէ բոլոր մարդերուն,
Որոնք երկինքըդ ամպոտ, ըրին երկիրըդ հըրդեհ.
Որոնք յետոյ ուրացան սիրտ-ոճիրները իրենց,
Եւ որ երբեք չգիտցան անդրադարձները քու մէջ:

Ալ լայնասիրտ հիմա դուն, դիտէ վերէն, մեծի պէս,
Մարդոց դէմքերը բոլոր որոնք մանուկ մը կարծես՝
Աւագին մէջ կը խաղան, կը պոռչըտան, կը ծեծուին,
Կը համբուրուին ալ ոմանք կանաչներու մէջ անդին:

Նոյն քարափէն, իրիկուան, այդ մանուկներն երբ երթան,
Խաղաղութիւնը նորէն կը կաթի վար աստղերէն.
Բայց քեզմէ զատ եւ ոչ ոք - ցաւերու մէջ մոռացկոտ -
Կը յիշէ Սէր-Առտըւան մեծ աղմուկներն աչքիդ մօտ:

Ու մի՛ յիշեր, մոռցի՛ր իսկ, զանոնք որ քեզ ճըմլեցին
Տըղայութեան սէրերուն. որոնք անցան հոգիին
Ակօսներուն մէջ անհուն: Անոնց ներէ՛ կանուխ,
Խաղաղութիւնը քեզմէ որ բաշխըւի ամէնքին:

ԱՆԵԼ